ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 67/9

08-ը հուլիսի 2023 թվականի

ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը

Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:

Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ ՏՀՏ-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:

Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ5. բարդ և անծանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:

Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:

Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը: